Պառվըցած՝ տառմըցած։

*

Պըռտուճնեըաց հմենից տառն աղքըտութենն ի, պարտքերից հմենից ղորը՝ խյոկին տալն ի։

*

Պըստիկ կյախ՝ շան քյոթոթն էլ խորոա կըլնի, իշու քուռակն էլ։

*

Պտուղ ուր ծառից շատ ղատ չի ինե։

*

Պուտուկն ասաց՝ «Տակս ոսկի կա» շերեփն ասաց՝ «Ես հո՞ստ կուկյամ»։

*

Ռես չէլած տեղ՝ կյըլին էլ «աղա» կկանչեն։

*

Սթի պռչ՝ հերկեն կըլնի, ծեր՝ չուխի տկից կթըռնի տուս։

*

Սյուքյ չէլած սան էրտըսից վույ-վույը ծնն տուս չի կյա։

*

Սոխի սեյրադն ի որ կյլոխ կուտա։

*

Տախ ախչկան ասիցին՝ «Ընչի՞ չես կընացե իրկան» ասաց՝ «Ուղող չէկավ, իմ խերն էլ չիտուլ»։

*

Ցան, որ էննու տամտնէն ըննեն, տախտն անավել կմնա։

*

Տաշտի խմոր ի՝ թխելով կըփլըսի, խո թաշտի լվածք չի, որ սատանեն ավըլցուցի։

*

Տերտըըող խարս՝ նշխարքյ ճրի ճամխեն կուտի։

*

Ուռու ծառ կէրթա-կյուկյա, կասի՝ «Ես դարդի տեր եմ».
Բարդի ծառ կէրթա-կյուկյա, կասի՝ «Ես սիրու տեր եմ».
Քյան բարդի ծառ՝ պանցր չկա, քյան սիրու տեր՝ քյաղցր չկա։

*

Քյամին ասաց՝ «Մարաքյ, այուըստ պյաց, քյե հառթ եմ պիրե.
Մարաքյն ասաց՝ «Նյա քյու պիրած կուղեմ, նյա քյու տարած»։

*

Քյամին ասաց՝ «Վույ, վույ, վույ, իմ սունտեղ քյամին տարավ»։

*

Քյանիմ՝ կուղի պոչն հերկընեա, կյոռտան կաել ծուկ չի սառնա։

*

Քյառսուն փակ տիր վեր առան, կրողի առաճ չի պռնվե։

*

Քյսթադն՝ առքավութնից ի իկե։

*

Օցի կծած կըսաղանա, լեզվի կծած չի սաղանա։

*

Օցն ի որ կանա մտնի օցի պյոնի մեչ, խո խուլվի կոպալ չի՞ կանա մտնի օցի պյոն։

## ՕՐՀՆԱՆՔ, ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔ, ԵՐԴՈՒՄ, ԱՆԵԾՔ, ՊԱՐՍԱՎԱՆՔ

### ՕՐՀՆԱՆՔ[1]

Առպած քյե հերկեն ումբր անի։

*

Ատենախոս՝ Խանա Փյութկլի սըփ Կյեորք ուր ղորութնով քյե հիմդաա ըլնի։

*

Դռը որ էըթաս՝ ճամխեն դուղ ըլնի, կըսմաթըտ՝ յուղ-ղուղ ըլնի։

*

Թըխթըմորըտ օխնուկ մնա։

*

Լոս կաթի վեր քյու խոր-մոր կյերեղմնին։

*

Խաղաը օղորմի քյու ծնողաց։

*

Խեր Ապրախամու կյոք նստելուն առժանանաս։

[1] Սովորաբար այս օրհնանքները ուղղված են տղամարդկանց։

*

Խեր Ալլահսամուն կոնախ իկողներ՝ քյու սուփրի վրեն էլ նստեն։

*

Ձեռքդ չոր ճողին խալեն՝ ծաղկած ծառ դառնա։

*

Մայրիկ-Մայրամ աստվածածին՝ ուր սուփ պինում քյն օխնի։

*

Յոթ սրբով սեղան նստես։

*

Պյարով յաճնրացլա թաք-փսակին արժանանաս։

*

Սիմոն ծերունի տառնաս։

*

Սիվտակ մուրուս ընենա։

*

Վեր աստվորին՝ ախ չքյաշես։

*

Տունըդ շեն մնա։

*

Քյրիստոսի օխնենքյն առնես։

*

Քյու մեկըն խաղար տյառնա։

## ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔ

Սիրելի անձնավորությանը խմիչքով հյուրասիրելիս՝

—Դե, կյալըդ պյալի, հյա ասպած ըսըսկնա ուրախ սրտով, ցամաքյ աչկով մեյ մեկու տիսուն առժան անի։

—Տյուք էլ սաղ ըլնեք, ասպած հյա ըսըսկնա ուրախ սեղնի ռասա պիրի։

*

Բաժակը պարպելուց հետո՝

Հյուրասիրող.—Անուշներ։

Հյուրասիրված.—Անուշ կենաս, սաղ ըլնես։

Հյուրասիրող.—Մեկ էլ թալենք (խմենք), տիսնանք աղո՞րթ անուշ ի։

*

Եվ այսպես խոսակցելով ու ուտելով բաժակների թիվը ավելանում էր, սակայն միշտ միևնույն «անուշներ» կամ՝ «անուշ արա»-ն, «անուշ կենաս»-ն ու «իմ անուշ սյու էս»-ը։

## ԵՐԴՈՒՄ[1]

* Ալահվաքյիլ։

*

* Անունն աստծու։

*

Ես իմ խյոկին (ձեռքը կրծքին խփելով)։

*

Էսը սըլթընի արթար լուսուն առժան չըլնեմ (Ձեռքը գետի արևելք պարզելով)։

*

Էսը արեվ-արեկյակ չհադ ըլնեմ։ (Ցույց տալով արևը)։

*

Էսը թոռվան խալալ խացի պախապան խաչտըկներ չհադ ըլնեմ։ (Միաժամանակ ձեռքը թոնրան շըթան մոտեցնելով կամ ուղղակի խփելով)։

*

Էսը խաց յոթ սուտն ինեմ ծեռըս չինի (հացը ձեռքը բռնելով)։

*

Էսը ճրաքյի լոս վրես խավար մնա։ (Ձեռքը դեպի վառ ճրագը պարզելով)։

*

* Թե սուտ կասեմ՝ իմ կնիկն իմ մեր, իմ քյուրն ըլնի։

*

Իմ մոր տված անարատ կաթ ձիկ խարամ ըլնի։

*

Խոկյիս՝ սատանին տամ։

*

Կյապրել խրիշալկի փողի ծենին առժան չըլնեմ։

*

Մաս-պատարաքյի առժան չըլնեմ։

*

* Մեր ախպերութեն չհադ։

*

Մեր ճայտի մեռոն չհադ։ (Ձեռքը ճակատին տանելով)։

*

* Վալահ, բիլա, թալահ։

---

[1] Աստղանիշով (*) նշանակված երդումները սովորաբար տղամարդիկ են ասում, առանց աստղանիշի՝ թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք։

•

* Վալտհի։

•

* Քյրիստոս։

•

* Քյրիստոս ուր տատասաանով վրես խռով կենա։

•

* Քյրիստոսի պիպեռ ղարկող ընեմ։

•

* Քյրիստոսի սուփ տվաղան, թե խայ իս՝ ավատա։

## ԱՆԵԾՔ[2]

Ախ կանչի՝ լսող չխասնի, մախ կանչի՝ կյրող չխասնի։

•

Անկյալծակի ցավի աիրանա։

•

Աչկ պյաց ընի՝ մեչ լոս չընի, ափ պյաց ընի՝ մեչ խաց չընի։

•

Աստըծուց խնթրեմ՝ լոս թափվի, ծեռից պըռնեն՝ սանեն-պիրեն։

•

Աստըծուց կանչեմ խացն ընի՝ ծոց չընի, ծոցն ընի՝ խաց չընի։

•

Աստըծուց կանչեմ՝ վեր կուշա փորին ծեռ չըանի։

•

Աստծուց կանչեմ՝ ուրախութեն ուր տան տըռնեն ներս չմտնի։

•

** Բեմուըաղ

•

* Գյուլուլախորով ընես։

•

* Էրաղի մեչ իրիկ տիսնաս։

•

Թաժա խացի խոտ տնից տուս չիկյա։

•

** Թաժա մեռել։

•

* Թաքյ-փսակի չառժանանաս։

•

** Ժուռ-մուռամեռ։

•

Իմ անճար պերանով կանչեմ՝ մախ չտիսնա, նստի՝ միս թափվի, կայնի՝ ուսկոռ պեյպըկվի։

•

Իմ մեղավոր պենով կանիծեմ՝ ուր ղոլվաթ կյել-կյաղտնին ընի, ուր խոկյին՝ սև սատանին ընի։

•

* Ինգընավորես, փ՛ռփրոոտես, խաչ տընեն պերանտ, զանգյակ կախեն վղետ, տանեն Ջաղսր՝ սրփ Նշանա տուռ։

•

* Խըրխընշան ծիյով տուս էրթաս, սելի վրեն պառկուկ քյե առն պիրեն։

•

Խոկյին ասաըծուն չիտա։

•

* Ծամեյըտ սիվտակ իստըկես։

•

** Կյրողի խեխտած։

•

** Կյրողի տարած։

•

* Մեջ խորրտ տան պառվընաս։

•

* Յոթ սարից ղեն սատկես, սեվ խտրարըտ տուն կյա։

•

* Նաղարա-զուռնով քյե խորեն։ (Նաղարա-զուռնայով թաղելիս են եղել միայն երիտասարդներին՝ անսպասելի, ողբերգական մահվան դեպքում, երբ սրանք նշանված են եղել կամ նոր ամուսնացած)։

•

* Նխշուն ծիյուց ցած կյաս։

•

* Նշանլուտ տամ իրկան։

•

* Շախմար օցու ղեհիր մտնի մեչ ջիգրիտ։

•

* Շվոթի կատվու պես տանսրներ նոնատ կանչես։

•

** Պատանքյըա կարվի։

•

* Պատանքյըա մաղի թելով կարենա։

[2] Առանց սատղանիշի անեծքները սովորաբար ասում են կանայք կանանց. մեկ աստղանիշով անեծքները ուղղված են ամուրի տղաներին ու աղջիկներին և առհասարակ նորապսակներին. երկու աստղանիշով՝ փոքր տղաներին։

*

Պատից կախուկ մաղ չալրոտվի, կապից կախուծ սիկ չրթանոտվի։

*

* Ջալադի սանձիվ չոքյես բալքիմ։

*

* Ջհեյրտ սնդրկի մեչից տյուս չիկյա։

*

Սեվ թուլիմ ուր կյլոխ։

*

* Սեվ փոշիտ քյոլողիտ վրայեն առնեն տակ, թալեն վեր մորրտ կյլխուն։

*

* Սուր թրի ռաստ կյաս։

*

Սուք ընի ուր փայ-պյաժին։

*

** Վարամ Խալած։

*

Վիզրտ տակրտ մնա, խեր-պյարին չտիսնաս բալքյիմ։

*

* Տիրամոր սառցրվոր տառնաս, այլակերպվես՝ հիսան-օղլու ջյարդ չմանես։

*

Ուր իրիկ խորեմ։

*

Ուր լաճեր խորեմ։

*

Ուր շեն տնից մեյ ջուխտ սոլ ընի ուր փայ-պյաժին։

*

Ուր վանք տնից փեշեր թաղթրփելով դյուս կյա։

*

Ուր տուն Անի քյաղքի ավերակներ սառնա։

*

Ուր տունն ավիրվի, ուր տյուռ փայվի։

*

Ուր ունեցվածք էրազ տառնա, ղինք աշխրրքում բեմուրազ տառնա։

*

* Փառացրա տակ կյաս։

*

* Քյու թաժա խարս կրնդա նխշուն քյողք սեվ նիրկեն։

*

* Քյու խինեն քյամին տանի։

*

* Քյու մոր ծամեր կրտրեն փռեն վեր քյու նաշին։

## ՊԱՐՍԱՎԱՆՔ[1]

*Աղաբարղ։

*

Աղքյտի թրնթոց։ (Կարճահասակ ու նիհար տղամարդու հասցեին)։

*

Բարայողուրդ։ (Բարձրահասակ աղամարդու հասցեին)։

*

*Խառու կրճա։

*

Բենամուս։

*

Թափաղյող։

*

*Լավրնդու կրճա։

*

Խերվան խրորնդատ։ (Բարձրահասակ տղամարդու հասցեին)։

*

Կրնդյան կնիկ։

*

Կրռտուկ եղ։

*

Կիշրրվան կյեշ։ (Բարձրահասակ աղամարդու հասցեին)։

*

Կյարնան կյել։ (Կարճահասակ, նիհար տղամարդու հասցեին)։

*

Կյեմշու կուռոփ։ (Կարճահասակ, դեր տղամարդու հասցեին)։

*

Կյրողի թարանշա։ (Բարձրահասակ տղամարդու հասցեին)։

*

Կոթ կըտրած դընքյ։ (Կարճահասակ, դեր տղամարդու հասցեին)։

*

Կույանոցի ցախավել։ (——»——)

*

Կուռուղույի կատու (——«——)

*

Աչմու բայրաղտար։ (Բարձրահասակ աղամարդու հասցեին)։

[1] Առանց աստղանիշի պարսավանքները, սովորաբար կանայք հասցեագրում են տղամարդկանց, մեկ աստղանիշովը՝ կանայք կանանց։

*

Ճոշ պաղսըվան ակլատիզ։ (——«——)

*

Ճվտուկ սակառ։ (Կարճահասակ, նիհար տղամարդու մասին)։

*

Մայմոդի սունաթ։ (Բարձրահասակ տղամարդու հասցեին)։

*

Մըդըրբու մաղրակա։ (Կարճահասակ, նիհար տղամարդու հասցեին)։

*

Մըսրի կոճոն։ (——«——)

*

Նախրի էշ։

*

Շարխոշի շոախոա։ (Կարճահասակ, գեր տղամարդու հասցեին)։

*

Սաղի ըսւղա։
Սալախանի շուն։

*

*Սոխաարի։

*

Վարակյա կոտան։

*

Տավրի չլուտ։ (Բարձրահասակ տղամարդու հասցեին)։

*

Տրժըխոցի ղուռնաչի։(——«——)

*

Ուտի ախպ։

*

Քյարվընի քյուրթ։

*

Քյոռ Աղնավուր։ (Բարձրահասակ տղամարդու հասցեին)։

*

Քյոռ թյաքյա։

*

Քյոփաքյ շուն։

*

Օդոսաոսի աղվես։ (Կարճահասակ, նիհար ադամարդու հասցեին)։

*

* Օոոսպի։

## ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Երր մի քանի պարապ տղամարդիկ կամ կանայք միասին էին լինում, որպես մտքի վարժություն, միմյանց հանելուկ էին առաջարկում։ Ահա այդ հանելուկներից մի շարք։

Անդերձան շարած,
Անասեղ կարած,
Անկյործ շավրի մեջ
Փակ կուժով պիրած։
(Նուռ)

Կլոր՝ քյանձ նուկի,
Տափակ՝ քյանձ խառջեկաթ,
Սև՝ քյանձ սաթ,
Սիվտակ՝ քյանձ կաթ։
(Կաշաղակ)

էն որ խավքն ի՝ երկինք-կյեախն կան կուկյա,
Ուրա պոնից տյուս չի կյա։
(Աչք)

Նա՝ ըաղըրդյան կպիրի,
Նա՝ դուքընդար կըծախի,
Նա՝ տվոդ խամ կախսնա,
Նա՝ ուտող կյոն կախսնա։
(Մայրական կաթ)

էն ինչ, էն ինչ՝
Որ ասես՝ արե-արե, չի կյա,
Որ ասես՝ մի՛ կյա, մի՛ կյա, կուկյա։
(Շրթունք)

Հմեն ջանին՝ մեյ մութ մարաքյ,
Մեջն էրկու ջար անկոթ ուրաքյ։
(Բերանն ու ատամները)

էրկու աուն՝ մեյ սուն։
(Քիթ)

Անպոչ կաել՝ կպե սլաա։
(Ականջ)

Անջան, անսաս,
Տյու դոր էրթաս,
Լոքյա-լոքյա
Խետըա կուկյա։
(Սավեր)

Ինքյն Ատամուց առաճ ի ծնվե,
Համա ուր քյառսունքյ աեո չի թըմըմվե։
(Լուսին)

Քյաըեն-փետեն, արթաը դադեն,
Ջորս չոր, հերկեն ոտ փորի աակ,
Արաիկն ի սե, կյլոխն ի ծակ։
(Թոնրատուն)

Դադեն նսաե վեր թըմրան,